

ԵՆԱԿՈՐՄ ՅԱՆԴԻՊՈՒՄ

ՄԻՆԵԻՆ ԴԱՎԵԼԱՇՎԻԻ. «ՎՐԱՍԱՆԸ ԱԶԱԿԻՑ Է ԶԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂ ԶԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԻՆ»

Վրաստանի նախագահ Միխեիլ Դավելաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը ողջունում է վաշինգտոնում, ԱՄՆ նախագահի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների ստորագրած խաղաղության հռչակագիրը:

- Մենք ողջունում ենք Ադրբեջանի և Հայաստանի կողմից երկարատև խաղաղության հաստատման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, որոնք պետք է նպաստեն տարածաշրջանի շարժմանը դեպի խաղաղություն և

կայունություն,- հայտարարեց Միխեիլ Դավելաշվիլին և հավելեց, որ Վրաստանն աջակցում է Հարավային Կովկասում խաղաղ համակեցության բանաձեւին և հետևողականորեն արտահայտում է տարածաշրջանում խաղաղության

և կառուցողական համագործակցության խթանմանը նպաստելու պատրաստակամությունը:



ՌՈՒՍԱՍՏԱՆ - ԱՄՆ ԳԱԿԱԹՆԱԺՈՂՈՎ ԱԼՅԱՍԿԱՅՈՒՄ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԹՐԱՄՓԻ ՍԱՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Երեկ՝ օգոստոսի 15-ին, ԱՄՆ-ի Ալյասկայի նահանգի Անքորիջի Էլմենորոֆ-Ռիչարդսոն ռազմաբազայում անցկացվեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը: Որոշումը կայացվել է Վաշինգտոնի և Մոսկվայի միջև երկարատև խորհրդակցություններից հետո:

Հիշեցնենք, որ 2023 թվականին Վլադիմիր Պուտինի դեմ Միջազգային քրեական դատարանի կողմից տրված ձերբակալման օրոշերը զգալիորեն սահմանափակել է հնարավոր հանդիպումների վայրերը: Դրա պատճառով Ռուսաստանը մերժել է եվրոպական տարբերակները, այդ թվում՝ Վիեննան և ժնևը:

ԱՄՆ նախագահի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպմանը երկու երկրների ղեկավարները քննարկելու են ուկրաինական դիմակայության կարգավորման, ինչպես նաև՝ երկկողմ հետաքրքրություններ կայացնող այլ հարցեր:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Ե ՌԻԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՏՄԱՆ ՈՒՂՎԱԾ ԶԱՆՔԵՐԸ

Եվրոպական միության երկրների ղեկավարները ողջունել են ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ջանքերը՝ «Ուկրաինայում Ռուսաստանի ծավալած պատերազմին վերջ դնելու և Ուկրաինայում արդար ու տեսական խաղաղության և անվտանգության հասնելու ուղղությամբ»:

Ինչպես նշված է եվրոպական խորհրդի տարածած հայտարարության մեջ, ուկրաինացիները պետք է իրենք որոշեն իրենց ապագան, և, որ Ուկրաինայի ուղին դեպի խաղաղություն «չի կարող որոշվել առանց Ուկրաինայի»:

Հայտարարության մեջ նշվում է, որ Ուկրաինայում ՌԴ ծավալած պատերազմն ավելի լայն հետեւանքներ ունի եվրոպական և միջազգային անվտանգության համար:

ԵՄ երկրների ղեկավարները նշել են նաև, որ ԱՄՆ-ի և գործընկերների հետ միասին կշարունակեն աջակցությունը Կիևին, ինչպես նաև կշարունակեն պատժամիջոցները Մոսկվայի նկատմամբ:

Կից ծանոթագրության մեջ նշված է, որ Հունգարիան չի միացել այս հայտարարությանը:

ԻՍՐԱԵԼ - ՀԱՄԱ ՅՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՂԵՏ ԳԱԶԱՅԻ ԶԱՏԱԾՈՒՄ

Գազայի առողջապահության նախարարությունը հայտնել է, որ Իսրայելի կողմից շարունակվող շրջափակման պայմաններում սովի և թերսնուցման պատճառով մահացածների թիվը հասել է 222-ի, որոնցից 101-ը երեխաներ են:

Տեղեկություններ են հաղորդվում, որ իսրայելական հարձակման հետեւանքով Գազայի հատվածում զոհված լրագրողների թիվը հասել է 6-ի:

Գազայի առողջապահության նախարարությունը տեղեկացրել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 7-ից ի վեր, իսրայելական հարձակումների հետեւանքով զոհված պաղեստինցիների թիվը հասել է 61 430-ի, վիրավորվել է 153 213 մարդ, որոնց շարքում զգալի թիվ են կազմում կանայք ու երեխաները:

ՏԱՐԵԼԻՑ

«ԴԻԴՊՈՐԻՆ ՎՐԱՅ ԱՉԳԻ ԱՆՍԱՍԱՆ ՈԳՈՒ ԵՎ ՀԱՂԱՅՆԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րական և բարոյական նշանակությունը, հաղթանակ, որը Վրաստանին վերապահեց տարածաշրջանային առաջատար երկրի կարգավիճակ:

- Յուրաքանչյուր ազգի պատմության մեջ կան օրեր, որոնք էապես որոշում են նրա ապագան: 1121թ. օգոստոսի 12-ը հենց այդպիսի օր է մեզ

համար: Դիդպորին վրաց ազգի անսասան ոգու, միասնության և հաղթանակի խորհրդանիշն է: Դա միայն ճակատամարտում հաջողությունն չէր. դա վրացական պետականության գաղափարի ու միաժամանակ այն քրիստոնեական արժեքների վերջնական հաղթանակն էր, որոնց վրա հիմնված է մեր ամբողջ մշակույթն ու պատմությունը:

նր: Թվաքանակով անհավասար ճակատամարտում Դավիթ Շինարարի ռազմավարական տեսլականը, մարտիկների նվիրվածությունը և ազգի միասնությունը ստեղծեցին «փառահեղ հաղթանակը», որը ոչ միայն ազատություն բերեց մեր երկրին, այլև հիմք դրեց Վրաստանի ոսկե դարին՝ քաղաքական, տնտեսական, մշակույթային և կրթական վերածնունդին, և մեր երկիրը վերածեց տարածաշրջանի ամենահզոր պետության,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն՝ հավելելով, որ դա ոչ միայն պատերազմի հաղթանակ էր, այլև վրացական պետականության գաղափարի և միաժամանակ քրիստոնեական արժեքների վերջնական հաղթանակը:

ԶԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՇԻՆԴԻՍԻՈՒՄ ԶՈՐՎԱԾՆԵՐԻ ՀԻՇՆԱՍԱԿԻՆ



Վրաստանի նախագահ Միխեիլ Դավելաշվիլին, վարչապետ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի խոսնակ Շավլա Պապուաշվիլին, հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեղիանին՝ հարգանքի տուրք մատուցեցին 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի ժամանակ Շինդիսիում զոհված վրացի զինվորների հիշատակին:

մալրի մոտ հավաքված զոհված զինվորների ընտանիքներին:

Վրաստանի կառավարության ներկայացուցիչները մասնակցեցին Շինդիսիում հերոսաբար զոհված 17 զինվորների հուղեանձուտի արարողությանը, որը կատարեց Գորիի և Ատենի միտրոպոլիտ Անդրիան՝ հոգեւորականության հետ միասին:

- Այսօր, մենք գլուխ ենք խոնարհում Շինդիսիի 17 երիտասարդ հերոսների աջջե և հարգում նրանց հիշատակը, ովքեր անմոռանալի հերոսության պատմություն կերտեցին ռուս-վրացական պատերազմի ամենադժվար ու անհավասար մարտերից մեկում և մեզ թողեցին հայրենասիրության, մարդասիրության ու բարձրագույն արժեքների մղվածության արժանի օրինակ,- ասաց պետնախարար Թեա Ախվեղիանին:

ՎՐԱՍԱՆ - ԹՈՒՐԲԻԱ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՐԿԿՈՐՄ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 13-14-ին Վրաստանի նախագահի Միխեիլ Դավելաշվիլին, իր տիկնոջ՝ Թամար Բագրատիոնիի հետ, աշխատանքային այցով գտնվում էր Թուրքիայում:

Անկարայում, Թուրքիայի նախագահական պալատում կայացավ Միխեիլ Դավելաշվիլիի և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առանձնազրույցը, որին հաջորդեց պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկրների միջև տնտեսական համագործակցության հարցեր: Վրաստանի և Թուրքիայի նախագահները քննարկեցին նաև իրավիճակն Ուկրաինայում և Մերձավոր Արևելքում:

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաև Թուրքիայի Մեծ Ազգային ժողովի նախագահ Նուրման Քուրթուլմուշի հետ:



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՍԱՀՄԱՆԵՅ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՅ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԸՆՏՐԱՀԱՄԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դաշինքները:

ԿԸՀ-ում, ներկա դրությամբ, քննարկվում է «Երրորդ ուղի», «Վրաստանի միասնության և զարգացման կուսակցություն», «Դեմոկրատների դաշինք» կուսակցությունների գրանցման հարցը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը օգոստոսի 9-ին կայացած նիստում սահմանեց 2025 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընտրական սուբյեկտ-

ների համարները:

«Կուսակցիա՝ փոփոխությունների համար»-ը և «Միացյալ ազգային շարժում»-ը չեն ստացել իրենց ընտրական համարները՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու համար ԿԸՀ չդիմելու պատճառով:

Ըստ նոր համարակալման՝ 1 համարի տակ հանդես կգա «Հայրենիք, Լեզու, հավատք» (Մամուլի, Էնա, Սարժմունեթա) կուսակցությունը, 2 - «Ժողովրդավարական դաշինք», 3 - «Կոնսերվատորներ Վրաստանի համար», 4

- «Վրացական միասնություն», 5 - «Մեր միասնական Վրաստանը», 6 - «Երրորդ ուղի», 7 - «Ազատ Վրաստան», 8 - «Վրացի հայրենասերների դաշինք», 9 - «Ուժեղ Վրաստան-Լեյն», 10 - «Ձախակողմյան դաշինք», 11 - «Վրաստան», 12 - «Կանաչների կուսակցություն», 13 - «Վրաստանի միասնության և զարգացման կուսակցություն», 14 - «Ժողովրդական կառավարություն», 25 - «Գախարհան» Վրաստանի համար», 36 - «Գիրչի», 41 - «Վրացական երազանք» ընտրական սուբյեկտները:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒԹՅՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ՍԱՄՅԽԵ-ՉԱՎԱԽԵԹԻ. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՅԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՆԹԱՋԵԻ ՄԵՅ ԵՆ



Սամցխե-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազոր Չաալ Գելաշվիլին եւ տեղակալ Գիորգի Միքելաձեն աշխատանքային հանդիպում անցկացրին մունիցիպալիտետի քաղաքապետերի եւ տեղակալների հետ: Հանդիպմանը քննարկվեցին ենթակառուցային նախագծերի ընթացքը:

Հատուկ ուշադրություն դարձվեց դպրոցական, կրթական եւ գիտական ենթակառուցների բարելավման հարցերին:

ԱՆԱԼՔԱԼԱՔԻ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐԳՎՈՒՄ ԵՆ

Ախալքալաքի մունիցիպալիտետի Ափնիա եւ Գոգաշեն գյուղերը կապող ճանապարհահատվածում սկսվել են վերականգնողական աշխատանքներ: Նախագիծը կիրականացվի երկու փուլով: Աշխատանքների շրջանակում կվերանորոգվի ճանապարհը, որից հետո 2 կիլոմետրանոց հատվածում կտեղադրվի ասֆալտբետոնե ծածկույթ ու սեպտիկ բաբեր:

Մեկնարկել են նաեւ Ղաղղար գյուղի ներքին գյուղական ճանապարհի վերանորոգման աշխատանքները: Երկու կիլոմետրանոց հատվածում կտեղադրվի ասֆալտբետոնե ծածկույթ եւ ջրատար խողովակներ:

Վերոնշյալ նախագծերը իրականացվում են Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի եւ տեղական բյուջեի համաֆինանսավորմամբ, եւ, համապատասխանաբար, ծախսվելու է 1798000 եւ 1 611 000 լարի:

ՆԻՆՈՏՄԻՆԿԱ. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՅՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ

Նինոտմինիայի մունիցիպալիտետում, ենթակառուցների բարելավման նպատակով, ինտենսիվորեն իրականացվում են վերականգնման նախագծերը:

Այժմ ասֆալտապատվում է Թորիա գյուղի գյուղամիջյան ճանապարհը, ինչը զգալիորեն կբարելավի տրանսպորտի երթևեկության պայմանները եւ տեղի բնակչության համար կապահովի ավելի հարմարավետ ու անվտանգ միջավայր:

Աշխատանքների առաջին փուլը նախատեսվում է ավարտել ընթացիկ տարվա օգոստոսի 21-ին: Նախագծի արժեքը կազմում է՝ 566 000 լարի:

ԱՆԱՆՅԻՆԵ. ԿԳՈՐԾԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՅ ՄԱՆԿԱԳՐՏԵՉ

Ախալցխեի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին, քաղաքապետի առաջին տեղակալ Իլիա Ջարդիաշվիլին եւ սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր Համ-Վերոնշյալ օրինագանց քաղաքացին չի ներ-

բարձրում Բարդյանը ծանոթացան Ախալցխեի թիվ 4 մանկապարտեզի շինարարության ընթացքին:

100 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի շինարարությունը ֆինանսավորվում է Տարածաշրջանային նախագծերի հիմնադրամից եւ տեղական բյուջեից 1,653,470 լարիով:

ԲՈՐԺՈՍԻ. ԱՆՅՎԱՅՎԵՅ ՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Սամցխե-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազոր Չաալ Գելաշվիլին, Բորժոմիի քաղաքապետ Օթար Արբրիշվիլիի եւ հոգեւորականների հետ միասին, Բորժոմիի Տիմոթեոսեանի Սուրբ Աստվածածնի Վերափոխման տաճարի բակում ներկա գտնվեցին «Բորժոմի» համույթի մենահամերգին: Համերգի շրջանակում, ելույթ ունեցավ նաեւ «Մեսխեթի» համույթը:

ՇԱԿԱ. ԴՈՒՇԳԻՈՒՄ ԿԱՌՈՒՅՎՈՒՄ Ե ԿԱՍՈՒՐՉ



Շակայի մունիցիպալիտետի ճանապարհային ենթակառուցների բարելավման նպատակով, Դուշի գյուղում ակտիվ ընթանում են կամրջի կառուցման աշխատանքները:

Քվեմո Քարթլիի պետական լիազոր Լեւան Խարաբաձեն եւ մունիցիպալիտետի քաղաքապետ Իլիա Սաբաձեն ստուգել են նախագծի ընթացքը:

Կառուցվում է 33 մետրանոց կամրջային անցում, ճաղաշարեր եւ կարգավորիչ պատեր, ինչպես նաեւ ընթանում են ավաներձ գոտու ամրացման աշխատանքները: Աշխատանքների ավարտից հետո 15 գյուղերի 10,000 շահառուներ կօգտվեն ժամանակակից եւ անվտանգ ճանապարհային ենթակառուցներից:

Ծրագրերն իրականացվում են Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի եւ տեղական բյուջեի համաֆինանսավորմամբ, եւ դրանց ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 1 միլիոն լարի:

ԹԵԹՐԻՇՎԱՐՈ. ԱՆՅՎԱՅՎԵՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՅՅԻՆ

Վետերանների հարցերով պետական ծառայության կողմից կազմակերպված եւ Թեթրիժարոյի քաղաքապետարանի աջակցությամբ, Ռազմական բժշկության օրվա կապակցությամբ, Վ.Սանիկիձեի անվան վետերանների կլինիկական հոսպիտալի բժշկական անձնակազմը անցկացրեց բարեգործական բժշկական ակցիա:

Միջոցառմանը ներկա էին Քվեմո Քարթլիի փոխնահանգապետ Նիկա Կոբախիձեն, Թեթրիժարոյի քաղաքապետ Գիորգի Ծիկլաուրին, Վետերանների հարցերով պետական ծառայության տնօրեն, գեներալ-մայոր Կոբա Կոբալաձեն եւ Վ.Սանիկիձեի անվան վետերանների կլինիկական հոսպիտալի տնօրեն Ամուր Ռեիշվիլին:

Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱՆՈՂՋԱՊԱՐԻԹՅՈՒՆ

ԱՆՉԻՋՈՒՄ ԴԱՅՔԱՐ` ՀԻՎԱՆՂՆԵՐԻՆ ԱՆԱՐԳԱՐ ԳՆԵՐ ԱՐԱՋԱՐԿՈՂ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԴԵՏ

Վրաստանի առողջապահության նախարար Միխեիլ Սարջվելաձեն արձագանքել է մրցակցության եւ սպառողների պաշտպանության գործակալության կողմից չորս դեղագործական ընկերությունների նկատմամբ կիրառված տուգանքներին:

Ինչպես նշել է Սարջվելաձեն, նախարարությունը անգիջում կլինի հիվանդներին անարդար գներ առաջարկելու դեպքում, եւ կդիմի այն համապատասխան կառույցներին, որոնք պատասխանատու են օրենքի խախտումներին արձագանքելու համար:



- Ցավոք, դեղագործական ոլորտը ամենից հաճախ քննադատվում է մրցակցության բացակայության եւ գների արհեստական բարձրացման համար: Շատ դեպքերում սա ամբողջովին արդարացված է: Վերջերս շատ կարելի էր քայլեր են ձեռնարկվել իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Նման վերլուծական փաստաթղթերը ազդանշան են, որ անհրաժեշտ է շարունակել աշխատանքը, որպեսզի հիվանդները կարողանան օգտվել արդար գներից: Սա չափազանց կարելի է: Ուսումնասիրության արդյունքում բացահայտված թերությունները, այդ թվում՝ ծախսերի այս կատեգորիայի ներառումը գնային նշածողում, բացարձակապես անընդունելի են,- ասել է Միխեիլ Սարջվելաձեն:

Նախարարի խոսքով, դեղագործական արտադրանքի գների վերահսկման աշխատանքները կշարունակվեն նաեւ ապագայում:

- Սա, ի թիվս այլ գործոնների, նշանակում է հղման գների հետագա ամրապնդում, գուցե նույնիսկ դրանց ընդլայնում: Ցավոք, կան գործելակերպեր, որոնք բացարձակապես անընդունելի են պետության համար, եւ այս դիրքորոշումը կպահպանվի նաեւ ապագայում: Եթե բախվեք մեծ իրավիճակի, եւ ունենանք բավարար փաստարկներ, ապա պարտադիր կդիմենք իրավապահ մարմիններին կամ այն մարմիններին, որոնք պատասխանատու են օրենքի խախտումներին արձագանքելու համար: Նախարարությունը միշտ կօգտագործի այս հնարավորությունը եւ բացարձակապես անհաշտ կլինի այն փաստի հետ, որ հիվանդին առաջարկվում է անարդար գին: Հարկ է նշել, որ վերջին ժամանակներում, հատկապես կարելի էր դեղամիջոցների վերաբերյալ գործող կարգավորումները նպաստել են մրցակցության աճին: Համապատասխանաբար, շուկան ավելի առողջ է դարձել, չնայած միշտ կա վտանգ, որ որևէ գործընթաց ինչ-որ տեղ կգնա սխալ ուղղությամբ: Մենք անընդհատ վերահսկում ենք եւ հենց կոնկրետ բողոքարկման հիմք լինի, առողջապահության նախարարությունը չի հապաղելու,- ընդգծել է Միխեիլ Սարջվելաձեն:

Մրցակցության եւ սպառողների պաշտպանության գործակալությունը 560,000 լարիով տուգանել է չորս դեղագործական ընկերությունների՝ գերիշխող դիրքի չարաշահման համար:

ԿԱՆԽԿԵԼ Ե ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ԿԱՆԽԵԼ Ե ԱՎԵԼԻ ՔԱՆ 750 ԳՐԱՄ ԳՉԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿՅԱ ԻՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Վրաստանի ներքին գործերի նախարարության եկամուտների ծառայության «Թբիլիսիի օդանավակայան» մաքսային անցակետի մաքսային աշխատակիցների եւ Վրաստանի ներքին գործերի նախարարության պարեկային ոստիկանության դեպարտամենտի աշխատակիցների համատեղ գործողության արդյունքում, Թբիլիսիի միջազգային օդանավակայանում հայտնաբերվել են բնրանյութեր եւ հոգեմետ նյութեր պարունակող դեղամիջոցներ (ընդհանուր առմամբ՝ 111 հար):



Մեծ թվով հոգեմետ նյութեր և բնրանյութեր հայտնաբերվել են Թբիլիսիի միջազգային օդանավակայանում: Փորձեր են անցկացվում դեղամիջոցների նյութաբանական հետազոտության նպատակով: Փորձեր են անցկացվում նախարարության համապատասխան վարչություն հետագա արձագանքման համար: Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն

Մաքսային աշխատակիցների կողմից օտարերկրյա քաղաքացու անձի եւ ուղեբեռի մանրամասն գնման արդյունքում, հայտնաբերվել է հատուկ հսկողության ենթակա դեղագործական արտադրանք, որի ներմուծումը թույլատրվում է միայն համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա: Վերոնշյալ օրինագանց քաղաքացին չի ներ-

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային կետերում, «Սարիի» եւ «Քութայիի օդանավակայան» անցակետերում հայտնաբերվել է օրենքի երեք խախտում:

Մասնավորապես, կասկածի հիման վրա, մաքսային ծառայողները, օտարերկրյա քաղաքացիների ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ նրանց պատկանող ուղեբեռի մանրամասն գնման արդյունքում, հայտնաբերել են չհայտագրված ոսկե զարդեր (ընդհանուր քաշը՝ 755.66 գրամ): Չհայտագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 189,754.19 լարի:

Խախտողներից մեկի գործի նյութերը փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության գննչական ծառայությանը՝ հետագա արձագանքման համար, իսկ 2 խախտողներ տուգանվել են 145,074.58 լարիով՝ համաձայն՝ Մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի առաջին մասի:

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՐԱՍԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՀՐԱՊԱՐԱԿԵՅՑ 63 ՄՈՒՆԻԳԻԱԼԻՏԵՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

թյան գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, կուսակցության գործադիր քարտուղար, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Մամուկա Մոխրաբաձեն, կուսակցության տարածաշրջանային քարտուղար Դիմիտրի Սամխարաձեն, կուսակցության քաղաքապետի անդամ, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, կառավարության անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, հասարակական կազմակերպությունների և Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Ներկայացնելով առաջիկա ընտրություններին մունիցիպալիտետների քաղաքապետի թեկնածուներին՝ Իրակլի Կոբախիձեն հիշեցրեց, որ օգոստոսի 1-ին «Վրացական երազանք» կուսակցությունը սկսեց նախընտրական քարոզարշավը՝ Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնում հանրությանը ներկայացնելով գործող քաղաքապետ Կախա Կալաձեի և Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորների թեկնածուներին:

- Այսօր, որպես «Վրացական երազանքի» նախագահ և ընտրական շտաբի ղեկավար, ցանկանում եմ ներկայացնել ողջ երկրի տարածքով՝ 63 մունիցիպալիտետներում քաղաքապետի հաճախ արդեն հայտնի թեկնածուների ուլիները:

Նախ՝ նշեմք, որ բոլոր հարցումների համաձայն, տեղական ինքնակառավարումը հանրության կողմից օգտվում է վստահության բարձր մակարդակով: Բնականաբար, մեր խնդիրն է՝ ավելի ամրապնդել այդ վստահությունը: Դա մեր կուսակցության տեղական ներկայացուցչությունների, տեղական իշխանության ղեկավարների, քաղաքապետների, սակրեբուլոյի նախագահների, սակրեբուլոյի անդամների, տեղական իշխանության յուրաքանչյուր աշխատակցի գործունեության արդյունքն է: Ցանկանում եմ օգտվել առիթից և բոլորին շնորհակալություն հայտնել: Հատկապես շնորհակալություն եմ հայտնում քաղաքապետներին, ովքեր, անցած չորս տարիների ընթացքում, արհեստավարժությամբ ու բարեխղճորեն ծառայեցին հարազատ մունիցիպալիտետներին և տեղի բնակիչներին:

Հարկ է նշել նաև, որ այսօր ներկայացվելիք 63 թեկնածուների մեծամասնությունը գործող քաղաքապետ և կամ քաղաքապետի պաշտոնակատար: Այսօր, մենք կներկայացնենք նաև տարբեր մունիցիպալիտետներում նոր թեկնածուներին, - հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

«Վրացական երազանք» կուսակցության նախագահի ներկայացմամբ, Կախաբեի տարածաշրջանի 8 մունիցիպալիտետներից 5-ում առաջադրվել են գործող քաղաքապետների թեկնածուները: Դրանք են Ալեքսանդր Փիցխելաուրին (Ախմետա), Գիորգի Մաճավարիանին (Գուրջաանի), Նիկոլոզ Ջանիաշվիլին (Դեդոփլիսոդարո), Ջոնոթ Մոխրաբաձեն (Լագոդեթի), Մալխազ Բեգիաշվիլին (Սիդնադի) և նոր թեկնածուներ՝ Իլիա Մզբալաշվիլին (Ղվարեթի սակրեբուլոյի գործող նախագահ), Վախթանգ Կակուտաշվիլին (Սագարեջո, պաշտպանության նախարարության համակարգի հանրային ծառայող), Վաժա Մաղրաձեն (Թելավի, Կախեթի երկրամասային դատախազի գործող առաջին տեղակալ):

Քվենո Քարթլիի տարածաշրջանում յոթ մունիցիպալիտետներից չորսում առաջադրվել են նախկին ղեկավարները: Դրանք են Նինո Լացաբիձեն (Ռուսթավի), Դավիթ Կարգարեթիլին (Գարդաբանի), Կոբա Մուրադաշվիլին (Դմաճիսի), Իլիա Սաբաձեն (Ճավկա): Ինչ վերաբերում է նոր առաջադրվող թեկնածուներին, ապա դրանք են Դուրի Իսմայիլովը (Մառնեուլի, հանրային ծառայող), Միխեիլ Ավցիաուրին (Թեթրիծղարոյի սակրեբուլոյի գործող փոխնախագահ), Ջանուրի ճիթանավան (Բուլճիսի, հանրային ծառայող):

Մցխեթա-Մթիանեթի երկրամասի միայն Թիանեթի մունիցիպալիտետում է առաջադրվել գործող քաղաքապետ՝ Լեան Ծիկլաուրու թեկնածուները, մյուսներում ներկայացվել են նոր ղեմնքեր: Դրանք են Գոգի Աբուաշվիլին (Մցխեթա, ճարտարապետ, մենեջեր), Կախաբեի Հիտաուրին (Դուլեթի, սակրեբուլոյի գործող նախագահ), Կոբա Գելաձեն (Ղազբեգի, ինժեներ, մենեջեր):

Շիդա Քարթլիի տարածաշրջանի չորս մունիցիպալիտետներից երեքում առաջադրվել են նախկին քաղաքապետների թեկնածուները: Դրանք են Կոնստանտին Բուզալաձեն (Գորի), Ջագա Կուլիաշվիլին (Քարեթի) և Վախթանգ Մախուրաձեն (Կասախ): Խաշուրիում քաղաքապետի թեկնածու է առաջադրվել մասնավոր հատվածում փորձառու մենեջեր Պաստա Չաղունելին: Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի վեց մունիցիպալիտետներից չորսում առաջադրվել են գործող քաղաքապետների թեկնածուները: Դրանք են Մելքոն Մակարյանը (Ախալքալաքի), Անի Մոսոյանը (Նինոծմինդա), Գոչա Քինաձեն (Ադիգեթի) և Ռոստոմ Մագրաբեկիձեն (Ասպինձա): Ախալցխիսի և Բորժոմի մունիցիպալիտետներում քաղաքապետի թեկնածուներ են առաջադրվել լրագրող Վառլամ Ծիկլաուրին և իրավապահ Մամուկա Գելաշվիլին:

Իմերեթի տարածաշրջանի 12 մունիցիպալիտետներից 9-

ում առաջադրվել են գործող քաղաքապետների կամ քաղաքապետի պաշտոնակատարի թեկնածուները: Այսպես, Քոթայքի քաղաքապետի թեկնածու է ներկայացվել Դավիթ Էրեմեիշվիլին, Սախչերեում՝ Լեան Իվանաշվիլին, ճիթարայում՝ Գիլի Մոդեբաձեն, Խարազաուլիում՝ Կոբա Լուրսմանաշվիլին, Թեթրլայում՝ Մամուկա Ռոբաքիձեն, Վանիում՝ Ալեքսանդր Գոգորիշվիլին, Մամուրեթիայում՝ Դավիթ Բախտաձեն, Խոնիում՝ Լադո Ջուրխաձեն, Ծղալտուբոյում՝ Գենադի Բալանջիվաձեն: Բաղդադիում քաղաքապետի թեկնածու է առաջադրվել՝ Նոդար Գիորգաձեն (սակրեբուլոյի գործող նախագահ), Ջեստափոնիում՝ Վախթանգ Դանբաշիձեն (սակրեբուլոյի գործող նախագահ), Տղիբուլում՝ Դավիթ Կուլբաշվիլին («Վրացական երազանքի» Տղիբուլի կազմակերպության ղեկավար):

Ռաճա-Լեչխումիի տարածաշրջանի երկու մունիցիպալիտետներում քաղաքապետի թեկնածուներ են առաջադրվել սակրեբուլոյի գործող նախագահներ՝ Ճաբուկի Ճաբուկիանին (Ցագերի) և Գիորգի Գագուլիանին (Լեմտեթի), իսկ Ամբրուաուրիում և Օնիում հաջողակ ձեռներեցներ՝ Ջագա Քեւանիշվիլին և Դավիթ Լոբժանիձեն:

Սամեգրելո-Ջեմո Սվանեթիի տարածաշրջանի ինը մունիցիպալիտետներից հինգում գործող քաղաքապետները կարող են հոկտեմբերի 4-ին վերընտրվել իրենց պաշտոններում: Դրանք են Դավիթ Բուկիան (Խոբի), Վախթանգ Գաղեթիան (Սենակի), Գիգա Գաբելիան (Աբաշա), Կապիտոն Ժորժիլանին (Մեստիա): Իսկ Ջուրղիդի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու է առաջադրվել Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դաթ Կոդուան, Հիտրոծղոնում՝ Մախկին պատգամավոր Ջուրբեր Իգորիան, Մարտվիլիում՝ հաջողակ ձեռներեց Գիորգի Նաճղեթիան, իսկ Ճալեցիխայում՝ հանրային ծառայող Գուրա Սաջախան:

Գուրիայի տարածաշրջանի Լանջխուբի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու է առաջադրվել գործող քաղաքապետ Ալեքսանդր Սարիշվիլին, Օզուրգեթիում՝ դասախոս և մենեջեր Պաստա Կունճուլիան, Չոխատաուրիում՝ գործող փոխքաղաքապետ Մինդիա ժղերիան:

Ինչ վերաբերում է Աջարիային, ապա վեց մունիցիպալիտետներից երեքում թեկնածուներ են առաջադրվել գործող քաղաքապետները: Դրանք են Իրակլի Ցեցխլաձեն (Քոբուլեթի), Ջագա Դիասանիձեն (Խելվաշաուրի), Օմար Տակիձեն (Շուախեթի), իսկ երկու մունիցիպալիտետներում՝ Քեդիում և Խուլոյում քաղաքապետի թեկնածուներ են առաջադրվել Աջարիայի ինքնավար հանրապետության Գերադայն խորհրդի գործող պատգամավորներ Մամուկա Թուրմանիձեն և Վախթանգ Բերիձեն:

Բաթումիում քաղաքապետի թեկնածու է առաջադրվել Աջարիայի ինքնավար հանրապետության կառավարության աշխատակազմի գործող պետ Գիորգի Ցինցաձեն:

Ներկայացնելով քաղաքապետի թեկնածուների վերոնշյալ ցուցակը՝ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, վստահությամբ հայտարարեց, որ թվարկած թեկնածուները կհաղթեն համապատասխան մունիցիպալիտետներում:

- Մեր խնդիրը պարզ է, երկրի ողջ տարածքով, բոլոր 64 մունիցիպալիտետներում ինչպես քաղաքապետների, այնպես էլ՝ սակրեբուլոյի նախագահների ընտրություններում հաղթանակն է: Ուսումնասիրությունները հաստատում են, որ դա բացարձակապես իրատեսական և իրագործելի խնդիր է: Բնականաբար, մեր ընտրական շտաբը, կուսակցությունը կլինի առավել մոբիլիզացված, որպեսզի հասնենք այդ նպատակին: Քաղաքապետի թեկնածուներին մաղթում եմ հաջողություն,- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈՇՄԻՆԳՅՈՒՄ ՆԵՐԿԱՅՆԱՎԵՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Օգոստոսի 14-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության Սամցխե-Ջավախեթի համակարգող Սերգի Մուշկուղիանին և Սամցխե-Ջավախեթիում պետական լիազորի ներկայացուցիչ Ջասալ Գելաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Մամուկյանն ու Սմբատ Կյուրեղյանը Ախալքալաքիում և Նինոծմինդայում կուսակցության ակտիվին ներկայացրեցին վերոնշյալ մունիցիպալիտետների քաղաքապետների թեկնածուներ Սելբոն Մակարյանին և Անի Մոսոյանին:

Նշվեց, որ Սելբոն Մակարյանի ու Անի Մոսոյանի քաղաքապետի պաշտոնում արդյունավետ գործունեության արդյունքում, Ախալքալաքիում և Նինոծմինդայում իրականացվել են ներկայումս էլ իրականացման փուլում են տարբեր մակարդակի ենթակառուցային նախագծեր ու հենց այդ արդյունավետ գործունեության հաստատումն է այն փաստը, որ «Վրացական երազանքը» Սելբոն Մակարյանին երկրորդ անգամ առաջադրեց Ախալքալաքի քաղաքապետի թեկնածու, իսկ Անի Մոսոյանը արդեն երրորդ անգամ է արժանացնում նման աջակցության: Սելբոն Մակարյանն ու Անի Մոսոյանը շնորհակալություն հայտնեցին ցուցաբերած վստահության համար և վստահեցրին, որ հնարավորինս կանեն այն արդարացնելու համար:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԻՉԻՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՉԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից: Պահպանության ոստիկանության առաքելությունը երկրի քաղաքացիների անվտանգության ապահովման ու նրանց գործունեության համար առողջ միջավայրի ստեղծումն է: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի և անձի անվտանգության պահպանություն, ինչպես նաև երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

- Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւյալ սպասարկումները.
* ոստիկանական պահպանություն
* պահպանություն՝ տեխնիկական միջոցներով
* պահպանություն-ուղեկցում պահակախմբով
* ավտոմեքենայի GPS վերահսկողություն
* անձնական պահպանություն